

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ .....	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ .....	8
3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման .....	8
3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման .....	11
3.3. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման .....	14
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ .....	16
5. ԱՄՓՈՓՈՒՄ .....	19

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱՄՆ</b>	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՀՆԱ</b>	Համախառն ներքին արդյունք
<b>ՌԴ</b>	Ռուսաստանի Դաշնություն
<b>ՎԿ</b>	ՀՀ վիճակագրական կոմիտե
<b>ՖՆ</b>	ՀՀ ֆինանսների նախարարություն

## 1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ


2025 թվականին համաշխարհային տնտեսությունում և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական զարգացումները ձևավորվել են առևտրային լարվածության, քաղաքականության անորոշության, ինչպես նաև խոշոր տնտեսություններում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ճշգրտումների պայմաններում: Համաշխարհային տնտեսական աճը պահպանվել է նախորդ տարվա մակարդակում՝ կազմելով 3.3%: ԱՄՆ-ում և ՌԴ-ում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են, իսկ Եվրագոտում և Չինաստանում աճը պահպանվել է համեմատաբար կայուն: Միաժամանակ, գործընկեր երկրների կենտրոնական բանկերը տարվա ընթացքում աստիճանաբար մեղմել են դրամավարկային պայմանները, թեև քաղաքականության դիրքը ընդհանուր առմամբ շարունակել է մնալ զսպող:

Միջազգային ապրանքային շուկաներում 2025թ. զարգացումները տարբեր ուղղություններով են եղել: Նավթի միջազգային գինը նվազել է՝ պայմանավորված համեմատաբար թույլ պահանջարկով և առաջարկի աճով, իսկ պղնձի գինը շարունակել է աճել՝ պայմանավորված խտանյութի սահմանափակ առաջարկով, կանաչ էներգիայի անցման հետ կապված պահանջարկով, ինչպես նաև առևտրային քաղաքականության անորոշություններով: Պարենի միջազգային գներն աճել են՝ հիմնականում կաթնամթերքի, բուսական յուղերի և մսի գների բարձրացման ազդեցությամբ:

2025թ. ՀՀ տնտեսությունում տնտեսական աճի տեմպն արագացել է՝ նախորդ տարվա 5.9%-ի դիմաց կազմելով 7.1%: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և շինարարության բարձր աճերով: Տնտեսության մյուս հիմնական ճյուղերը ևս դրական նպաստում են ունեցել տնտեսական աճին, սակայն համեմատաբար ավելի փոքր չափով:

2025թ. փաստացի տնտեսական աճը գերազանցել է պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումը: Այսպես՝ պետական բյուջեով 2025թ. համար կանխատեսվում էր 5.1% տնտեսական աճ, իսկ 2026թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարում 2025թ. աճի սպասումը վերանայվել էր 5.2%: Փաստացի գրանցված 7.1% աճի պայմաններում անվանական ՀՆԱ-ն կազմել է 11,342.7 մլրդ դրամ՝ գերազանցելով 2025թ. պետական բյուջեի հիմքում դրված 10,891.5 մլրդ դրամ ցուցանիշը:

**Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, %**



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ:

Կանխատեսված ցուցանիշը հանդիսանում է 2025թ. պետական բյուջեի հիմքում ընկած կանխատեսումը, իսկ վերանայվածը՝ 2026թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարում 2025թ. սպասումն է:

Տնտեսության ճյուղային զարգացումները հիմնականում դրական են եղել: Արդյունաբերության՝ 2024թ. վերջից սկսված նվազման տեմպերը 2025թ. դանդաղել են, իսկ հուլիսից աճը վերականգնվել է արագացող տեմպերով: Արդյունքում արդյունաբերության թողարկումն աճել է 4.7%-ով՝ հիմնականում մշակող արդյունաբերության աճի հաշվին, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 2.4 տոկոսային կետ (հիմնականում պայմանավորված «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաոլորտներով): Արդյունաբերության աճին նպաստել են նաև էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման ենթաճյուղերը:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 5.6%-ով: Ճյուղի աճը հիմնականում պայմանավորված է եղել բուսաբուծության աճով, իսկ անասնաբուծությունը ևս դրական, սակայն ավելի փոքր նպաստում է ունեցել: Շինարարության ճյուղում գրանցվել է 20.2% աճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պետական բյուջեի, կազմակերպությունների և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով: Շինարարության բարձր աճի վրա շարունակել է ազդել բնակարանային շինարարության ակտիվությունը, որը կապված է նախորդ տարիներին ձևավորված բարձր պահանջարկի, ինչպես նաև հիպոթեքային վարկերի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի ծրագրի ազդեցության հետ:

Ծառայություններն աճել են 10.6%-ով՝ հիմնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության, տեղեկատվության և կապի, ինչպես նաև մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտների աճի հաշվին: Առևտուրն աճել է 3.0%-ով՝ պայմանավորված մեծածախ և մանրածախ առևտրի աճով: Ծառայությունների և առևտրի աճն ընդհանուր առմամբ արտացոլում է ներքին պահանջարկի պահպանվող բարձր մակարդակը:

**Աղյուսակ 1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները<sup>1</sup>**

	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ. պետական բյուջե	2025թ. փաստ
<b>Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ</b>	<b>6,991.8</b>	<b>8,501.4</b>	<b>9,492.5</b>	<b>10,249.8</b>	<b>10,891.5</b>	<b>11,342.7</b>
<b>ՀՆԱ-ի իրական աճ, %</b>	<b>5.8</b>	<b>12.6</b>	<b>8.3</b>	<b>5.9</b>	<b>5.1</b>	<b>7.1</b>
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	6.9	8.0	3.1	1.9	2.5	3.4
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	7.7	8.3	-0.6	1.5	4.0	3.3
Գնաճ (միջին), %	7.2	8.6	2.0	0.3	3.6	3.3
Գործազրկության մակարդակ	15.5	13.5	12.4	13.4	... <sup>2</sup>	12.8
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	4,685	6,661	8,159	8,603	8,863 <sup>3</sup>	9,495
Հիմնական միջոցներում ներդրումներ / ՀՆԱ, %	21.2	21.1	20.6	21.4	22.1	21.4
Արտահանում <sup>4</sup> / ՀՆԱ, %	35.9	53.0	60.9	73.1	39.9	50.0
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ, %	-3.4	0.7	-2.8	-4.6	-5.3	-7.2
<b>Հարկաբյուջետային ցուցանիշներ (մլրդ դրամ)</b>						
Պետական բյուջեի եկամուտներ	1,706.5	2,099.6	2,410.7	2,579.2	2,837.6	2,886.5
Հարկային եկամուտներ	1,609.6	1,962.5	2,273.9	2,390.9	2,720.3	2,725.2
Պետական բյուջեի ծախսեր	2,027.0	2,279.1	2,599.6	2,955.3	3,441.6	3,305.3
Ընթացիկ ծախսեր	1,810.7	1,898.7	2,127.0	2,413.6	2,706.8	2,612.6
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	216.3	380.4	472.6	541.7	734.9	692.7
Պետական բյուջեի պակասուրդ	320.5	179.5	188.9	376.1	604.0	418.8
ՀՀ կառավարության պարտք	4,209.8	3,969.7	4,571.9	4,892.9	5,910.0	5,354.5
<b>Հարկաբյուջետային ցուցանիշները (ՀՆԱ-ի նկատմամբ %)</b>						
Պետական բյուջեի եկամուտներ	24.4	24.7	25.4	25.2	26.1	25.4
Հարկային եկամուտներ	23.0	23.1	24.0	23.3	25.0	24.0
Պետական բյուջեի ծախսեր	29.0	26.8	27.4	28.8	31.6	29.1
Ընթացիկ ծախսեր	25.9	22.3	22.4	23.5	24.9	23.0
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	3.1	4.5	5.0	5.3	6.7	6.1

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կողմից հրապարակված 2025թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն: Քանի որ հաշվետվությունը հրապարակվելուց հետո ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ՀՆԱ-ի ցուցանիշները վերանայվել են, սույն տեղեկանքում ներկայացված են ՀՆԱ-ի վերանայված ցուցանիշները և դրանց հիման վրա վերանայված հաշվարկները:

<sup>2</sup> Ցուցանիշն առկա չէ:

<sup>3</sup> Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի կանխատեսումը կատարվել է՝ հիմք ընդունելով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը:

<sup>4</sup> Արտահանման ցուցանիշը ներկայացված է ըստ վճարային հաշվեկշռի:

	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ. պետական բյուջե	2025թ. փաստ
Պետական բյուջեի պակասորդ	4.6	2.1	2.0	3.7	5.5	3.7
ՀՀ կառավարության պարտք	60.2	46.7	48.2	47.7	54.3	47.2

2025թ. սպառողական շուկայում գնաճն արագացել և տարեվերջին մոտեցել է ԿԲ թիրախային ցուցանիշին: Ժամանակաշրջանի վերջի գնաճը կազմել է 3.3%, իսկ միջին գնաճը՝ նույնպես 3.3%: Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է դրամավարկային պայմանների մեղմացումը և քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել է 0.5 տոկոսային կետով՝ տարեվերջին սահմանելով 6.5%:

Արտաքին հատվածում 2025թ. ընթացիկ հաշվի պակասորդը խորացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 7.2%՝ նախորդ տարվա 4.6%-ի դիմաց: Վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել ապրանքների հաշվեկշռի վատթարացմամբ, թեև ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը շարունակել է մնալ բարձր մակարդակում: Արտաքին ապրանքաշրջանառությունը նվազել է՝ հիմնականում վերաարտահանման ծավալների կրճատման հետևանքով: Ապրանքների արտահանումը նվազել է 36.1%-ով, իսկ ներմուծումը՝ 23.6%-ով, ինչը հիմնականում կապված է թանկարժեք մետաղների վերաարտահանման նպատակով նախորդ տարի ձևավորված բարձր ծավալների կտրուկ նվազման հետ:

Միաժամանակ, աշխատանքի շուկայում արձանագրվել են դրական զարգացումներ: Գործազրկության մակարդակը 2025թ. կազմել է 12.8%՝ նախորդ տարվա 13.4%-ի դիմաց: Վարձու աշխատողների թիվը և միջին ամսական անվանական աշխատավարձը շարունակել են աճել:

## 2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՆԵՐԸ

Պետական բյուջեի եկամուտները 2025թ. կազմել են 2,886.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.9%-ով կամ 307.3 մլրդ դրամով: Ի տարբերություն նախորդ տարվա, երբ եկամուտների գծով արձանագրվել է էական թերակատարում, 2025թ. եկամուտները գերակատարվել են թե՛ բյուջեի սկզբնական, թե՛ ճշտված պլանների նկատմամբ: Մասնավորապես, եկամուտների կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 101.3%: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ **գերակատարումը հիմնականում պայմանավորված է կանխատեսվածից ավելի բարձր տնտեսական աճով, մինչդեռ ՀՆԱ-ի**

**նկատմամբ հավաքագրված հարկային եկամուտների նախատեսված հարաբերակցությունը չի ապահովվել:**

Եկամուտների աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է եղել հարկային եկամուտների և պետական տուրքերի աճով: 2025թ. հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 2,725.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.0%-ով կամ 334.3 մլրդ դրամով: Դրանց կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100.3%:

Պաշտոնական դրամաշնորհները 2025թ. կազմել են 10.7 մլրդ դրամ՝ ապահովելով ճշտված պլանի 56.4%-ը և նախորդ տարվա համեմատ նվազելով 60.1%-ով: Այլ եկամուտները կազմել են 150.6 մլրդ դրամ՝ ճշտված պլանի նկատմամբ ապահովելով 135.8% կատարողական, սակայն նախորդ տարվա համեմատ նվազելով 6.8%-ով: Արդյունքում, եկամուտների կառուցվածքում հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռն աճել է, իսկ պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների կշիռները նվազել են:


**Աղյուսակ 2. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ**

	2024թ.		2025թ.			
	Փաստացի	Պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %	Աճը 2024թ. համեմատ, %
<b>Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝</b>	<b>2,579.2</b>	<b>2,837.6</b>	<b>2,848.2</b>	<b>2,886.5</b>	<b>101.3</b>	<b>11.9</b>
<b>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</b>	2,390.9	2,720.3	2,718.4	2,725.2	100.3	14.0
Պաշտոնական դրամաշնորհներ	26.7	20.7	18.9	10.7	56.4	-60.1
Այլ եկամուտներ	161.6	96.6	110.9	150.6	135.8	-6.8

ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտները 2025թ. կազմել են 25.4%՝ նախորդ տարվա 25.2%-ի դիմաց: Այսինքն՝ եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը փոքր չափով բարելավվել է, սակայն մնացել է բյուջեով կանխատեսված 26.1% ցուցանիշից ցածր: Հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.0%՝ նախորդ տարվա 23.3%-ի դիմաց, սակայն այն նույնպես զիջել է 2025թ. պետական բյուջեի հիմքում դրված 25.0%

Կանխատեսմանը: Սա ցույց է տալիս, որ **թեև 2025թ. հարկային մուտքերի աճը ծրագրվածից բարձր է եղել, սակայն հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը չի հասել նախապես կանխատեսված ցուցանիշին:**


**Գծապատկեր 2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան վերջին տարիներին**



Հարկային եկամուտների աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել է ավելացված արժեքի հարկը՝ 6.6 տոկոսային կետով: ԱԱՀ-ի աճը պայմանավորված է եղել ինչպես ներմուծումից գանձվող հարկերի վերականգնողական աճով, այնպես էլ շինարարության ոլորտում նախորդ տարիների ակտիվության արդյունքում ձևավորված հարկային մուտքերի ժամանակային ազդեցությամբ: Հարկային եկամուտների աճին էական նպաստում են ունեցել նաև եկամտային հարկը՝ 3.2 տոկոսային կետով, և շահութահարկը՝ 2.8 տոկոսային կետով: Եկամտային հարկի աճը հիմնականում պայմանավորված է եղել աշխատավարձի ֆոնդի աճով, իսկ շահութահարկի աճը՝ նախորդ ժամանակահատվածում ձևավորված հարկվող շահույթների ավելացմամբ:

Հարկային եկամուտների աճին դրական, սակայն ավելի փոքր չափով նպաստել են նաև շրջանառության հարկը, ակցիզային հարկը, պետական տուրքը և սոցիալական վճարումները: Միաժամանակ, բնապահպանական և բնօգտագործման վճարները բացասական ազդեցություն են ունեցել հարկային եկամուտների աճի վրա՝ հակազդելով ընդհանուր աճին 1.2 տոկոսային կետով:

### Գծապատկեր 3. Հարկային եկամուտների աճին նպաստումները և ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխությունը 2025թ.



Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավմանը հիմնականում նպաստել են ԱԱՀ-ի և շահութահարկի մուտքերը: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով մուտքերի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ աճել է 0.7 տոկոսային կետով, իսկ շահութահարկինը՝ 0.3 տոկոսային կետով: Միաժամանակ, բնապահպանական և բնօգտագործման վճարների կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ նույն չափով զսպելով հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ընդհանուր բարելավումը:

Ընդհանուր առմամբ, 2025թ. պետական բյուջեի եկամուտների կատարումը նախորդ տարվա համեմատ բարելավվել է: Եկամուտները գերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ, հարկային եկամուտների աճը եղել է բարձր, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը բարելավվել է: Սակայն **հարկեր/ՀՆԱ ցուցանիշի փաստացի մակարդակը ցածր է եղել բյուջեի հիմքում դրված կանխատեսումից, ինչը ցույց է տալիս, որ եկամուտների բարձր աճի պայմաններում էլ հարկային ներուժի ամբողջական իրացումը շարունակում է մնալ կարևոր խնդիր:**

### 3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ


#### 3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման

2025թ. պետական բյուջեի ծախսերը կազմել են 3,305.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.8%-ով կամ շուրջ 350 մլրդ դրամով: Ընդհանուր ծախսերի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 95.8%՝ նախորդ տարվա 93.9%-ի դիմաց: Այսինքն՝ թեև ծախսերը կրկին թերակատարվել են, կատարողականը նախորդ տարվա համեմատ որոշակի բարելավվել է:

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում կազմել է 29.1%՝ 2024թ. 28.8%-ի դիմաց: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, այլ ծախսերի, տոկոսավճարների և սուբսիդիաների աճով:

Ընթացիկ ծախսերը կազմել են 2,612.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8.2%-ով: **Ընթացիկ ծախսերի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 97.5%:** Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է՝ 23.5%-ից դառնալով 23.0%: Ընթացիկ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների և կենսաթոշակների, այլ ծախսերի, տոկոսավճարների և սուբսիդիաների աճով:

**Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման**



Բյուջեի ծախսերի կառուցվածքում գրանցվել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշռի աճ, ինչը կարելի է գնահատել որպես դրական միտում: Դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում 2024թ. 18.3%-ից 2025թ. հասել է 21.0%-ի: Միաժամանակ, ընթացիկ ծախսերի՝ առանց

տոկոսավճարների կշիռը նվազել է՝ 71.1%-ից դառնալով 68.5%, իսկ տոկոսավճարների կշիռը պահպանվել է բարձր մակարդակում՝ կազմելով 10.6%:

Ընթացիկ ծախսերի կառուցվածքում սոցիալական նպաստներն ու կենսաթոշակները կազմել են 1,092.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.5%-ով: **Տոկոսավճարները կազմել են 349.1 մլրդ դրամ՝ աճելով 11.3%-ով**, սուբսիդիաները՝ 210.7 մլրդ դրամ՝ աճելով 12.2%-ով, իսկ այլ ծախսերը՝ 278.5 մլրդ դրամ՝ աճելով 20.4%-ով: Միաժամանակ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 3.3%-ով և կազմել 105.1 մլրդ դրամ: **Հատկանշական է, որ տոկոսավճարների բարձր մակարդակը շարունակում է զգալի բեռ հանդիսանալ պետական բյուջեի համար՝ սահմանափակելով զարգացմանն ուղղված այլ ծախսերի հնարավորությունները:**

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 692.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 27.9%-ով: Դրանց կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 90.1%: **Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կամ կապիտալ ծախսերը կազմել են 702.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26.0%-ով և ապահովելով ճշտված պլանի 89.6% կատարողականը:** Կապիտալ ծախսերի կատարողականը նախորդ տարվա 84.7%-ի համեմատ բարելավվել է, սակայն շարունակում է մնալ ամբողջությամբ չկատարված:

Կապիտալ ծախսերի կառուցվածքում հիմնական մասը կազմել են շենքերի և շինությունների գծով ծախսերը՝ 654.9 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 29.4%-ով և ապահովել ճշտված պլանի 90.9% կատարողականը: Մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերը կազմել են 40.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 8.1%-ով, իսկ այլ հիմնական միջոցների գծով ծախսերը կազմել են 7.3 մլրդ դրամ՝ նվազելով 3.1%-ով:

**Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	2024	2025				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2024թ. նկատմամբ
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>2,955.3</b>	<b>3,441.6</b>	<b>3,449.8</b>	<b>3,305.3</b>	<b>95.8%</b>	<b>11.8%</b>
<b>Ընթացիկ ծախսեր</b>	<b>2,413.6</b>	<b>2,706.8</b>	<b>2,680.6</b>	<b>2,612.6</b>	<b>97.5%</b>	<b>8.2%</b>
Աշխատանքի վարձատրություն	242.7	261.0	260.6	258.1	99.0%	6.3%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	108.7	94.8	114.6	105.1	91.8%	-3.3%
Տոկոսավճարներ	313.6	394.1	360.8	349.1	96.8%	11.3%
Սուբսիդիաներ	187.7	193.0	211.0	210.7	99.8%	12.2%
Դրամաշնորհներ	303.4	332.5	330.7	318.2	96.2%	4.9%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,026.20	1,092.2	1,120.9	1,092.8	97.5%	6.5%
Այլ ծախսեր	231.3	339.2	282.1	278.5	98.7%	20.4%
<b>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</b>	<b>541.7</b>	<b>734.9</b>	<b>769.1</b>	<b>692.7</b>	<b>90.1%</b>	<b>27.9%</b>
<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր</b>	<b>557.8</b>	<b>749.9</b>	<b>784.1</b>	<b>702.5</b>	<b>89.6%</b>	<b>26.0%</b>
Շենքեր և շինություններ	506.3	695.4	720.4	654.9	90.9%	29.4%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	43.8	35.8	52.4	40.3	76.8%	-8.1%
Այլ հիմնական միջոցներ	7.6	18.7	11.3	7.3	65.2%	-3.1%
<b>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</b>	<b>-16.1</b>	<b>-15.0</b>	<b>-15.0</b>	<b>-9.8</b>	<b>65.5%</b>	<b>-38.8%</b>

Ընդհանուր առմամբ, 2025թ. ծախսերի կատարողականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է, իսկ կապիտալ ծախսերի բարձր աճն ու դրանց կշռի ավելացումը ծախսերի կառուցվածքում կարելի է գնահատել որպես դրական զարգացում: Սակայն **ինչպես ընդհանուր ծախսերի, այնպես էլ հատկապես կապիտալ ծախսերի մասով շարունակվել են թերակատարումները, իսկ տոկոսավճարների բարձր մակարդակը շարունակում է մնալ պետական ֆինանսների կայունության տեսանկյունից մտահոգիչ գործոն: Հաշվի առնելով, որ կապիտալ ծախսերը կարևոր նշանակություն ունեն տնտեսության երկարաժամկետ աճի և պետական ներդրումների արդյունավետության տեսանկյունից՝ դրանց ամբողջական և ժամանակին կատարումը պետք է լինի բյուջետային քաղաքականության կարևոր նպատակներից մեկը:**


### 3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման

2025թ. բյուջեի ծախսերի մեծ մասը ուղղվել է սոցիալական ապահովությանը, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին և պաշտպանությանը: Նշված երեք ուղղություններով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 69.3%-ը՝ նախորդ տարվա 70.1%-ի դիմաց: Դրանցից սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են 873.7 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 26.4%-ը, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը՝ 739.3 մլրդ դրամ կամ 22.4%-ը, իսկ պաշտպանության ծախսերը՝ 678.8 մլրդ դրամ կամ 20.5%-ը:

Նախորդ տարվա համեմատ բյուջեի ծախսերի կառուցվածքում առավել էական փոփոխությունները կապված են պաշտպանության, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտների հետ: Պաշտպանության ծախսերի տեսակարար կշիռը 2024թ. 18.6%-ից 2025թ. աճել է մինչև 20.5%, իսկ կրթության ծախսերի կշիռը՝ 7.8%-ից մինչև 9.7%: Միաժամանակ, սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը նվազել է՝ 28.8%-ից դառնալով 26.4%: Տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերի կշիռը ևս նվազել է՝ 6.9%-ից դառնալով 6.4%:

Ըստ գործառնական դասակարգման՝ 2025թ. ծախսերի ընդհանուր կատարողականի վրա հիմնական ազդեցությունն ունեցել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, սոցիալական պաշտպանության, տնտեսական հարաբերությունների, կրթության և պաշտպանության ոլորտների ծախսերի կատարողականները:

### Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման



Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 739.3 մլրդ դրամ՝ ապահովելով ճշտված ծրագրի 95.9% կատարողական: Սակայն, չնայած թերակատարմանը՝ նախորդ տարվա համեմատ այս ուղղությամբ ծախսերն աճել են 10.1%-ով:

Պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 678.8 մլրդ դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ պաշտպանության ծախսերն աճել են 23.6%-ով, ինչի արդյունքում պաշտպանության ոլորտի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում զգալիորեն ավելացել է: Սա 2025թ. ծախսերի կառուցվածքի ամենակարևոր փոփոխություններից է:

Կրթության ոլորտի ծախսերը կազմել են 319.6 մլրդ դրամ՝ ապահովելով ճշտված ծրագրի 94.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ կրթության ծախսերն աճել են 38.4%-ով, ինչը ոլորտների շարքում ամենաբարձր աճերից է: Աճի պայմաններում, սակայն, ոլորտի ծախսերն ամբողջությամբ չեն կատարվել, ինչը հիմնականում կապված է հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, հիմնման և բարելավման ուղղությամբ նախատեսված ծախսերի կատարման հետ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 873.7 մլրդ դրամ՝ ապահովելով 97.0% կատարողական: Նախորդ տարվա համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն աճել են 2.6%-ով, սակայն ընդհանուր ծախսերում դրանց տեսակարար կշիռը նվազել է: Այս նվազումը հիմնականում

պայմանավորված է այն հանգամանքով, որ այլ ուղղություններով, մասնավորապես՝ պաշտպանության, կրթության և կապիտալ բնույթի ծախսերի աճը եղել է ավելի բարձր:

Տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերը կազմել են 212.5 մլրդ դրամ՝ ապահովելով 90.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ուղղությամբ ծախսերն աճել են 4.3%-ով, սակայն ընդհանուր ծախսերում ոլորտի կշիռը նվազել է: Տնտեսական հարաբերությունների ոլորտի համեմատաբար ցածր կատարողականը կարևոր է այն առումով, որ այս բաժնում են ներառվում տնտեսական ենթակառուցվածքների և զարգացման հետ կապված մի շարք ծախսեր:

Առողջապահության ծախսերը կազմել են 165.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.1%-ով և ապահովելով 96.0% կատարողական: Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ծախսերը կազմել են 246.7 մլրդ դրամ՝ աճելով 8.3%-ով և ապահովելով 96.9% կատարողական: Հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտի ծախսերը կազմել են 42.8 մլրդ դրամ՝ 86.2% կատարողականով, իսկ շրջակա միջավայրի պաշտպանության և բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայությունների ոլորտներում կատարողականները համեմատաբար ցածր են եղել՝ համապատասխանաբար 78.1% և 78.9%:

#### Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, մլրդ դրամ

	2024		2025			
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2024թ. համեմատ, %
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>2,955.3</b>	<b>3,441.6</b>	<b>3,449.8</b>	<b>3,305.3</b>	<b>95.8%</b>	<b>11.8%</b>
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	671.3	777.9	770.8	739.3	95.9%	10.1%
Պաշտպանություն	549.0	667.9	696.4	678.8	97.5%	23.6%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	227.8	247.6	254.5	246.7	96.9%	8.3%
Տնտեսական հարաբերություններ	203.7	230.0	234.3	212.5	90.7%	4.3%

Շրջակա միջավայրի պաշտպանություն	10.7	15.8	18.3	14.3	78.1%	32.7%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	14.5	16.8	14.9	11.8	78.9%	-18.8%
Առողջապահություն	154.8	168.1	172.7	165.8	96.0%	7.1%
Հանգիստ, մշակույթ և կրոն	40.5	47.4	49.6	42.8	86.2%	5.6%
Կրթություն	231.0	299.7	337.3	319.6	94.8%	38.4%
Սոցիալական պաշտպանություն	851.9	905.6	900.5	873.7	97.0%	2.6%
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	-	64.9	0.5	-	-	-

Ընդհանուր առմամբ, 2025թ. ծախսերի գործառնական կառուցվածքում ավելացել է պաշտպանության և կրթության ուղղությունների դերը, իսկ սոցիալական պաշտպանության և տնտեսական հարաբերությունների կշիռները նվազել են: Կատարողականի տեսանկյունից նախորդ տարվա համեմատ ընդհանուր պատկերը բարելավվել է, սակայն մի շարք ոլորտներում, հատկապես տնտեսական հարաբերությունների, շրջակա միջավայրի պաշտպանության, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, ինչպես նաև հանգստի, մշակույթի և կրոնի ուղղություններով, շարունակում են առկա լինել զգալի թերակատարումներ:

### 3.3. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման

Ծրագրային դասակարգման մակարդակում 2025թ. բյուջեի կատարման տվյալները ցույց են տալիս, որ մի շարք հանրային կարևորություն ունեցող միջոցառումների գծով պահպանվել են նշանակալի թերակատարումներ, որոնք հիմնականում վերաբերում են ենթակառուցվածքային, առողջապահական, կրթական, ջրային, թվային փոխակերպման և սոցիալական նշանակության առանձին միջոցառումներին:

Զգալի թերակատարում արձանագրվել է «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման գծով: Ճշտված պլանով նախատեսված 57.9 մլրդ դրամի դիմաց փաստացի ծախսվել է 48.3 մլրդ դրամը՝ ապահովելով 83.4% կատարողական: Թերակատարումը կազմել է շուրջ 9.6 մլրդ դրամ:

Էական թերակատարումներ են արձանագրվել նաև առողջապահական ենթակառուցվածքների ուղղությամբ: «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառման գծով ճշտված պլանը կազմել է 8.9 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի ծախսվել է 4.5 մլրդ դրամ՝ ապահովելով ընդամենը 50.3% կատարողական: Թերակատարումը կազմել է շուրջ 4.4 մլրդ դրամ: Բացի այդ, «Առողջապահական կազմակերպությունների վերազինում» միջոցառման կատարողականը կազմել է ընդամենը 67.3%՝ 2.8 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց փաստացի կատարվելով 1.9 մլրդ դրամի չափով:

Ջրային ենթակառուցվածքների մասով ևս առկա են զգալի շեղումներ: «Փոքր և միջին ջրամբարների կառուցում» միջոցառման գծով ճշտված պլանը կազմել է 1.6 մլրդ դրամ, սակայն փաստացի ծախսվել է ընդամենը 0.1 մլրդ դրամ՝ ապահովելով 7.3% կատարողական: «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում» միջոցառման գծով 2.4 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց կատարվել է 1.0 մլրդ դրամի ծախս կամ 42.6% կատարողական: Թերակատարումներ են արձանագրվել նաև արտաքին աջակցությամբ իրականացվող ջրային ծրագրերի գծով, այդ թվում՝ Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման և ջրամատակարարման ու ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման միջոցառումներում:

Կրթության ոլորտում թերակատարումները հատկապես վերաբերում են նախադպրոցական և հանրակրթական ենթակառուցվածքներին: «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառման գծով ճշտված պլանը կազմել է 7.1 մլրդ դրամ, փաստացի ծախսը՝ 5.5 մլրդ դրամ, իսկ կատարողականը՝ 77.6%: «Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման կատարողականը կազմել է 73.0%՝ 4.6 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց փաստացի կատարվելով 3.4 մլրդ դրամի չափով: Բացի այդ, «Սոցիալական որոշ խմբերի մինչև 5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում» միջոցառման կատարողականը կազմել է 68.4%:

Թվային փոխակերպման և բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման ուղղությամբ ևս կան նշանակալի թերակատարումներ: «Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառման գծով ճշտված պլանը կազմել է 13.4 մլրդ դրամ, փաստացի ծախսը՝ 8.9 մլրդ դրամ, իսկ կատարողականը՝ 66.2%: «Միասնական թվային միջավայրի ձևավորում» միջոցառման կատարողականը կազմել է 64.3%՝ 3.6 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց կատարվելով 2.3 մլրդ դրամի չափով:

Սոցիալական նշանակության առանձին միջոցառումների մասով ևս արձանագրվել են խնդիրներ: «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության» միջոցառման կատարողականը կազմել է 84.0%՝ 7.1 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց փաստացի կատարվելով 5.9 մլրդ դրամի չափով: Միջոցառման հանրային և սոցիալական կարևորությունը բարձր է, մինչդեռ թերակատարումը կազմել է ավելի քան 1.1 մլրդ դրամ: Միաժամանակ, «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի պետական ոչ առևտրային կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում» միջոցառման կատարողականը կազմել է ընդամենը 9.6%՝ 1.1 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց փաստացի կատարվելով 0.1 մլրդ դրամի չափով:

Ծրագրային դասակարգման մակարդակում արձանագրված թերակատարումները ցույց են տալիս, որ բյուջեի կատարման խնդիրը միայն ընդհանուր ծախսերի մակարդակով դիտարկելը բավարար չէ: Մի շարք կարևոր միջոցառումների մասով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ չեն իրականացվել կամ հետաձգվել են, ինչը կարող է ազդել ճանապարհային, առողջապահական, ջրային, կրթական և սոցիալական նշանակության ծառայությունների որակի ու հասանելիության վրա:

#### 4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2025 թվականին պետական բյուջեն կատարվել է 418.8 մլրդ դրամ պակասուրդով՝ բյուջեով նախատեսված 604.0 մլրդ դրամի և ճշտված պլանով սահմանված 601.6 մլրդ դրամի դիմաց: Այսինքն՝ պակասուրդը պլանավորվածից զգալիորեն փոքր է եղել՝ կազմելով ճշտված պլանի շուրջ 69.6%-ը: Ծրագրված ցուցանիշից պակասուրդի փաստացի մակարդակի շեղումը հիմնականում պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ պակասուրդի բացարձակ մեծությունն աճել է՝ 376.1 մլրդ դրամից հասնելով 418.8 մլրդ դրամի: Միևնույն ժամանակ, անվանական ՀՆԱ-ի աճը թույլ է տվել պահպանել պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը նույն՝ 3.7% մակարդակում:


**Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը**

	2024	2025		
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.
<b>Մլրդ դրամ</b>				
<b>Բյուջեի պակասուրդ</b>	376.1	604.0	601.6	418.8
<b>Ներքին աղբյուրներ</b>	359.1	255.4	320.9	280.8
Փոխառու զուտ միջոցներ	369.0	291.4	297.0	297.0
Ֆինանսական զուտ ակտիվներ	(9.9)	(36.0)	23.9	(16.1)
<b>Արտաքին աղբյուրներ</b>	17.0	348.6	280.7	137.9
Փոխառու զուտ միջոցներ	30.9	357.8	288.7	141.7
Ֆինանսական զուտ ակտիվներ	(13.9)	(9.2)	(8.0)	(3.8)
<b>% ՀՆԱ-ում</b>				
<b>Բյուջեի պակասուրդ</b>	3.7%	5.5%	-	3.7%
<b>Ներքին աղբյուրներ</b>	3.5%	2.3%	-	2.5%
Փոխառու զուտ միջոցներ	3.6%	2.7%	-	2.6%
Ֆինանսական զուտ ակտիվներ	-0.1%	-0.3%	-	-0.1%
<b>Արտաքին աղբյուրներ</b>	0.2%	3.2%	-	1.2%
Փոխառու զուտ միջոցներ	0.3%	3.3%	-	1.2%
Ֆինանսական զուտ ակտիվներ	-0.1%	-0.1%	-	0.0%

Պակասուրդի ֆինանսավորումն իրականացվել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին: Ներքին աղբյուրները կազմել են 280.8 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 320.9 մլրդ դրամի դիմաց, իսկ արտաքին աղբյուրները՝ 137.9 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 280.7 մլրդ դրամի դիմաց: Արտաքին աղբյուրների համեմատաբար ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող բյուջետային աջակցության վարկերի և արտաքին ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցների պլանավորվածից ցածր ստացմամբ:

Ներքին աղբյուրների կազմում հիմնական դերն ունեցել են փոխառու զուտ միջոցները, որոնք կազմել են 297.0 մլրդ դրամ և ամբողջությամբ համապատասխանել են ճշտված պլանին: Արտաքին աղբյուրների կազմում փոխառու զուտ միջոցները կազմել են 141.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 288.7 մլրդ դրամի դիմաց:

### Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պակասուրդի և պարտքի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 5,354.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 4,892.9 մլրդ դրամի դիմաց: Դրամային արտահայտությամբ կառավարության պարտքն աճել է, սակայն ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է՝ 2024թ. 47.7%-ից 2025թ. դառնալով 47.2%: Այս նվազումը հիմնականում պայմանավորված է անվանական ՀՆԱ-ի աճով:

ՀՀ պետական պարտքը 2025թ. տարեվերջին կազմել է 5,541.7 մլրդ դրամ կամ 14.5 մլրդ ԱՄՆ դոլար: Դրանից 2,683.5 մլրդ դրամը կազմել է արտաքին պետական պարտքը, իսկ 2,858.2 մլրդ դրամը՝ ներքին պետական պարտքը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքն աճել է 448.9 մլրդ դրամով կամ 8.8%-ով, իսկ ԱՄՆ դոլարով արտահայտված՝ 1.7 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 13.2%-ով: Պետական պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով:

Պարտքի կառուցվածքում շարունակվել է ներքին պարտքի դերի ավելացումը: ՀՀ կառավարության ներքին պարտքը 2025թ. կազմել է 2,858.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.8%-ով, իսկ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,496.4 մլրդ դրամ՝ աճելով 5.8%-ով: Արդյունքում, կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշիռը շարունակել է բարձրանալ, ինչը որոշակիորեն նվազեցնում է արտաքին փոխարժեքային ռիսկերը, սակայն մեծացնում է ներքին շուկայի և պարտքի սպասարկման պայմանների կարևորությունը:

## 5. ԱՄՓՈՓՈՒՄ

- **2025 թվականին ՀՀ տնտեսական աճի տեմպն արագացել է՝ նախորդ տարվա 5.9%-ի դիմաց կազմելով 7.1%:** Փաստացի տնտեսական աճը գերազանցել է ինչպես պետական բյուջեի հիմքում դրված 5.1% կանխատեսումը, այնպես էլ 2026թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարով վերանայված 5.2% սպասումը: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և շինարարության բարձր աճերով: Տնտեսության մյուս հիմնական ճյուղերը ևս դրական նպաստում են ունեցել տնտեսական աճին: Սակայն, տնտեսական աճի կառուցվածքը շարունակում է պարունակել որոշակի խոցելիություններ՝ սահմանափակելով աճի կայունությունը: Մասնավորապես՝ շինարարության բարձր աճը զգալիորեն պայմանավորված է եղել հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ազդեցությամբ, իսկ արդյունաբերության կառուցվածքում պահպանվել է առանձին ենթաճյուղերից կախվածության բարձր մակարդակը (օրինակ՝ ոսկու վերաարտահանման ակտիվացմամբ պայմանավորված, որը թեև նվազել է նախորդ տարիների համեմատ):

- **2025թ. պետական բյուջեի եկամուտների և հատկապես հարկային եկամուտների կատարողականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված կանխատեսվածից ավելի բարձր տնտեսական աճով:** Պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,886.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.9%-ով և ապահովելով ճշտված պլանի 101.3% կատարողական, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 2,725.2 մլրդ դրամ՝ աճելով 14.0%-ով և ապահովելով ճշտված պլանի 100.3% կատարողական: Հարկային եկամուտների աճն ու գերակատարումն առավելապես պայմանավորված են եղել կանխատեսվածից ավելի բարձր տնտեսական աճով, ինչպես նաև հիմնական հարկատեսակների՝ ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և շահութահարկի մուտքերի աճով: **Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2024թ. 23.3%-ից բարելավվել է մինչև 24.0%, սակայն այն էականորեն ցածր է եղել բյուջեի հիմքում դրված 25.0% մակարդակից, ինչը ցույց է տալիս, որ եկամուտների բարձր աճի պայմաններում էլ հարկային ներուժի ամբողջական իրացումը շարունակում է մնալ կարևոր խնդիր:**

- **Պետական բյուջեի ծախսերը զգալիորեն թերակատարվել են, ինչը նշանակում է, որ նախատեսված ծախսերի և ծրագրերի մի մասը չի իրականացվել:** 2025թ. պետական բյուջեի ծախսերը կազմել են 3,305.3 մլրդ դրամ՝ ապահովելով ճշտված պլանի նկատմամբ 95.8% կատարողական: Կապիտալ ծախսերը նույնպես թերակատարվել են, արձանագրվել է 89.6%

կատարողական: Ծախսերի, հատկապես կապիտալ ծախսերի թերակատարումը շարունակում է մնալ պետական ֆինանսների կարևոր խնդիրներից մեկը: Տնտեսության երկարաժամկետ աճի և պետական ներդրումների արդյունավետության տեսանկյունից կապիտալ ծախսերի ամբողջական և ժամանակին կատարումը պետք է լինի բյուջետային քաղաքականության կարևոր նպատակներից մեկը:

- **2025թ. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է, սակայն պարտքի սպասարկման բեռը մնում է բարձր մակարդակում:** Չնայած պարտքի բացարձակ ծավալի աճին՝ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է՝ 47.7%-ից դառնալով 47.2%: Պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազումը դրական միտում է, սակայն **պարտքի սպասարկման հետ կապված բեռը շարունակում է մնալ բարձր՝ հանդիսանալով մտահոգիչ գործոն:** Մասնավորապես, տոկոսավճարները 2025թ. կազմել են 349.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 10.6%-ը: **Տոկոսավճարների բարձր մակարդակը խնդիր է այն առումով, որ բյուջեի զգալի միջոցներ ուղղվում են պարտքի սպասարկմանը՝ սահմանափակելով այդ միջոցների օգտագործման հնարավորություններն այլ առաջնահերթ, այդ թվում՝ կապիտալ ներդրումների և սոցիալական ծրագրերի ֆինանսավորման ուղղություններով:**

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**